HUMAN RIGHTS WATCH

Ե՞րբ ես կկարողանամ տուն գնալ

Ի՞նչ է կատարվում որոշ երեխաների հետ Հայաստանում

Ո՞վ ենք մենք

HUMAN RIGHTS WATCH

Մենք կոչվում ենք Human Rights Watch

Մենք աշխատում ենք, որ աշխարհում բոլորը արդար վերաբերմունք ստանան և ունենան իրավունքներ:

Ինչի՞ մասին է սա



Սա այն մասին է, թե ինչ է կատարվում որոշ երեխաների հետ մի երկրում, որի անունն է Հայաստան:



Հայաստանը գտնվում է Եվրոպայի և Ասիայի մեջտեղում:

Հայաստանում որոշ երեխաներին ուղարկում են ապրելու հատուկ տներում: Այդ տները այն երեխաների համար են, ովքեր ծնողներ չունեն:



Այդ տները հաճախ շատ հեռու են նրանց ընտանիքներից և այլ մարդկանցից:

Երեխաներին կարող են այդպիսի տներ տանել, որովհետև

- Այդ երեխաները հաշմանդամություն ունեն, կամ
- Նրանց ընտանիքը աղքատ է և չի կարողանում հոգալ նրանց մասին

2016 թվականին մենք նայեցինք, թե ինչ է կատարվում այս երեխաների հետ Հայաստանում:

Մենք գնացինք երեխաների համար կառուցված որոշ տներ ու որոշ դպրոցներ:

Մենք խոսեցինք՝

- երեխաների և նրանց ընտանիքների հետ
- այդ տներում և դպրոցներում աշխատող մարդկանց հետ
- Երկիրը ղեկավարող մարդկանց հետ

Ի՞նչ ենք պարզել

Հատուկ տների մասին

Երեխաների համար վատ է ապրելը հատուկ տներում, որոնք իրենց ընտանիքից ու շրջապատից հեռու են:

Հատուկ տներում ապրելը կարող է երեխաներին և նրանց ընտանիքներին շատ տխրեցնել:

Երեխաների համար կյանքը կարող է դժվար լինել այդ տներում:
Օրինակ, որոշ տներում երեխաներին պահում են մեծ խմբերով:

Այդ պատճառով

- տներում աշխատողները երբեմն ժամանակ չեն ունենում երեխաներին օգնելու կամ հոգ տանելու համար

- երեխաները կարող է ստիպված լինեն ամեն օր նույն բաները անել

Երեխաների համար այս տներում կան նաև այլ խնդիրներ:

Օրինակ, շատ երեխաներ չեն սովորում այն բաները, որոնք կարող են նրանց պետք գալ ապագայում:



Վիճակը ավելի վատ է հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

Օրինակ՝

- շատ տներում հաշմանդամություն ունեցող երեխաների համար դժվար է ապրելը



- հաշմանդամություն ունեցող երեխաները կարող է ամբողջ կյանքը մնան այսպիսի տներում
- նրանք հնարավոր է երբեք չկարողանան աշխատանք կամ ընտանիք ունենալ

Շատ երեխաներ և նրանց ընտանիքներ չեն ստանում լավ օգնություն իրենց տան մոտ: Օրինակ՝ նրանք չեն ստանում բժշկի օգնություն, կրթություն և փող:

Նրանք միայն հատուկ տներում են կարողանում օգնություն ստանալ:

Սրա պատճառով ընտանիքները երբեմն իրենց երեխաներին հատուկ տներ են ուղարկում, չնայած, որ իրենք դա չեն ուզում:

Երեխաները պետք է կարողանան ապրել իրենց ընտանիքների հետ, երբ դա հնարավոր է:

Երեխաները պետք է լավ օգնություն և ուսում ստանան այնտեղ, որտեղ նրանք ապրում են:

Բայց սա տեղի չի ունենում շատ երեխաների և ընտանիքների համար Հայաստանում:

Կրթության մասին

Հաշմանդամություն ունեցող շատ երեխաներ լավ կրթություն չեն ստանում Հայաստանում:

Որոշ երեխաներ ընդհանրապես դպրոց չեն գնում:



Հաշմանդամություն ունեցող որոշ երեխաներ գնում են նույն դպրոցը, ինչ մյուս երեխաները: Բայց նրանք հաճախ վատ կրթություն են ստանում այնտեղ:

Դրա համար շատ պատճառներ կան:

Օրինակ՝

- շատ դպրոցների շենքերը հարմար չեն հաշմանդամություն ունեցող երեխաների համար

  Նրանց համար կարող է դժվար լինել հասնել զուգարաններ և այլ տեղեր և օգտվել այլ տեղերից



- հաշմանդամություն ունեցող շատ երեխաներ չեն սովորում այլ երեխաների հետ



- հաշմանդամություն ունեցող շատ երեխաներ դպրոցում չեն ստանում այն օգնությունը, որն իրենց պետք է

Այդ պատճառով հաշմանդամություն ունեցող որոշ երեխաներ ստիպված են լինում միշտ տանը մնալ:

Որոշ ընտանիքներ մտածում են, որ երեխաների համար ավելի լավ է հատուկ դպրոցներում կամ տանը սովորելը:

Բայց հատուկ դպրոցներում և տանը սովորելու հետ կապված դժվարություններ էլ կան:



Օրինակ՝

- շատ հատուկ դպրոցներ հեռու են տանից

  Այդ պատճառով երեխաները ստիպված են ապրել դպրոցում՝ իրենց ընտանիքներից և շրջապատից հեռու

- հաշմանդամություն ունեցող երեխաները չեն կարողանում խաղալ և ընկերանալ հաշմանդամություն չունեցող երեխաների հետ

Ի՞նչ է անում Հայաստանի ղեկավարությունը

Բոլոր երեխաները իրավունք ունեն

- ապրել շրջապատի մեջ

- ապրել իրենց ընտանիքի հետ, եթե այդպես չանելու շատ լուրջ պատճառ չկա

- ստանալ լավ կրթություն և սովորել այլ երեխաների հետ

Հաշմանդամություն ունեցող երեխաները նույնպես ունեն այս իրավունքները:

Հայաստանի ղեկավարները ավելի շատ աշխատանք են անում, որ դա տեղի ունենա:

Օրինակ, նրանք պատրաստվում են՝

- շատ երեխաներին հատուկ տներից հետ ուղարկել իրենց ընտանիքների մոտ

- երեխաներին և ընտանիքներին ավելի շատ օգնել այնտեղ, որտեղ նրանք ապրում են

- այնպես անել, որ հաշմանդամություն ունեցող երեխաները լավ կրթություն ստանան նույն դպրոցներում, ինչ մյուս երեխաները

Բայց մեր կարծիքով ղեկավարները ավելի շատ աշխատանք պետք է անեն, որ այս ամենը կատարվի:

Այլ երկրները նույնպես կարող են օգնել:

Ի՞նչ պետք է արվի սրանից հետո

Հայաստանի ղեկավարությունը պետք է

- թույլ չտա, որ երեխաների ուղարկեն հատուկ տներ, եթե դրա համար լուրջ պատճառ չկա

- այնպես անի, որ երեխաները այդ տներում կարճ ժամանակ մնան և հետո կարողանան ապրել ընտանիքում

- այնպես անի, որ փողը ծախսվի երեխաների և ընտանիքների համար լավ օգնության վրա

Այդ ժամանակ ընտանիքները ստիպված չեն լինի երեխաներին հատուկ տներ ուղարկել

Հայաստանի ղեկավարությունը պետք է այնպես անի, որ

- երեխաները կարողանան ապրել ուրիշ ընտանիքների հետ, եթե նրանք չեն կարողանում ապրել իրենց սեփական ընտանիքների հետ

  Երեխաները չպետք է ուղարկվեն հատուկ տներ

Հայաստանի ղեկավարությունը պետք է այնպես անի, որ

- հաշմանդամություն ունեցող երեխաները դուրս չման և նույնպես ստանան այս օգնությունը

Հայաստանի ղեկավարությունը պետք է այնպես անի, որ

- բոլոր հաշմանդամություն ունեցող երեխաները կարողանան լավ ուսում ստանալ և սովորեն մյուս երեխաների հետ միասին



- հաշմանդամություն ունեցող երեխաներին օգնելու համար լինեն բավարար թվով ուսուցիչներ և աշխատակիցներ

The Picture Communication Symbols ©1981–2016 by Mayer-Johnson LLC a Tobii Dynavox company. All Rights Reserved Worldwide. Thousands of resources available for free at www.boardmakeronline.com